ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ԵՎ ՕՍՄԱՆՅԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ (XV-XVII դարեր)

ԽԱՌԱՏՅԱՆ Ա. Ա.

Օսմանյան մայրաքաղաքում ոչ մահմեդական համայնքները, թեկուզ և սահմանափակ չափերով, օգտվում էին կրոնական ինքնավարությունից: Մեփական կրոնական և մի հայտնի շրջանակներում՝ քաղաքացիական հարաբերությունների իրացումը (պաշտամունք, ամուսնություն, կտակի ու ժառանգության խնդիրներ, տուրքերի հավաքում և այլն)՝ խարաջ վճարելու պայմանով, համայնքներին հնարավորություն էր տալիս վերարտադրվելու որպես կրոնական հանրություն, պահպանելու և այս կամ այն չափով զարգացնելու իրենց ազգային ու հոգևոր մշակույթը: Առողջապահության, դպրոցի, հարկեր հավաքելու գործը թողնելով համայնքների (միլեթներ) վրա՝ օսմանյան պետությունը բավականաչափ թեթևացնում էր իր պարտականությունները նրանց հանդեպ[1], այս բնագավառներում որևէ ծախս չանելով, այլ, ընդհակառակը, հարկերի ու տուրքերի համակարգի միջոցով ստանալով վերոհիշյալ հարաբերություններից գոյացող ապրանքային ու դրամական զանգվածի մի մասը: Միաժամանակ, օրենքներով կարգավորելով իրենց վերահսկողությունը ոչ մահմեդական հանրությունների ներքին հարաբերությունների, կարգուկանոնի նկատմամբ, օսմանյան իշխանությունները ուզած ժամանակ կարող էին կոպտորեն միջամտել դրանց ներհամայնքային գործերին՝ սկսած քաղաքացիական հարաբերություններից մինչև պատրիարք նշանակելը, դատաիրավական գործերի վերահսկողությունից ընդհուպ մինչև համայնքների կրոնադավանական նախասիրությունների վրա ճնշումների գործադրելը: Հենց միայն այն իրողությունը, որ շարիաթական դատարանն իրավասու էր քննության առնելու և բեկանելու ոչ մահմեդական համայնքներին վերաբերող որևէ քաղաքացիական գործ, ինքնին վկայում էր օսմանյան բոլոր հպատակների նկատմամբ տիրապետող կրոնի գերադաս դիրքի մասին:

Իր ներքին կարգուկանոնով և կենսագործունեությամբ Կոստանդնուպոլիսը բավականաչափ տարբերվում էր կայսրության մյուս քաղաքներից: Իսլամական ֆանատիզմն այստեղ չուներ ազատորեն ծավալվելու այն հնարավորությունը, ինչ գավառներում: Գաղթական խմբերն այստեղ կարող էին գտնել աշխատանք, որոշակի դժվարություններ հաղթահարելու գնով՝ նաև կացարան, ռայա գրվել այս կամ այն մզկիթին և ապահովել իրենց կենսամակարդակի գեթ նվազագույնը: Այս և նման այլ առավելությունները, մասնավորապես, հարկերի բավական կանոնակարգված լինելը՝ համեմատած գավառի հետ, Կոստանդնուպոլիսը

---

[1] *Османская империя. Система государственного управления, социальные и этнорелигиозные проблемы, М., 1986, с. 160.*

հրապուրիչ էին դարձնում ինչպես մահմեդական, այնպես էլ ոչ մահմեդական գաղթականների աչքին[2]:

Ըստ պաշտոնական իրավասության, օսմանյան մայրաքաղաքի կառավարման գործը դրվում էր մեծ վեզիրի (վեզիրի ազեմ) վրա, սակայն գրեթե մշտապես պատերազմող բանակը գլխավորելով՝ նա բացակայում էր քաղաքից, ուստի գործնականում նրան փոխարինում էր քեդխուդա բեկը կամ վեզիր քյահյասը[3]: Նա էր, որ իրականացնում էր միլեթների գլխավորների՝ պետությանը հարաբերվող գործառույթների (հարկերի հավաքում, սեփականատիրական-գույքային հարաբերություններ, պատրիարքների հաստատում կամ պաշտոնանկություն և այլն) վերահսկողությունը: Ստամբուլի կադիները՝ դատավարչական բարձրաստիճանավորները[4], գայմագամի հետ հաշվետու և ենթակա էին հենց վեզիր քյահյասին: Այս վերջինը, օգտվելով իր գրեթե անսահմանափակ իշխանությունից, ոչ քիչ դեպքերում դիմում էր ամեն մի միջոցի՝ միլեթների հաշվին պետական գանձարանը լցնելու և կաշառքներից իր բաժինը ստանալու համար: XVII դարի պատրիարքական կոիվները հայ (և ոչ միայն հայ) համայնքներում մի հայտնի չափով հրահրվում էին Օսմանյան Թուրքիայի պաշտոնեության՝ վեզիրի, վեզիր քյահյասի կամ գայմագամի կողմից, ընդսմին, կաշառքի չափերն ուռճացվում էին աճուրդին հատուկ եղանակներով՝ ով շատ տար, նա էլ ստանում էր պատրիարքի բաղձալի աթոռը: Թովմա Բերիացու սպանությունը (1657), որ կազմակերպել էին հինգ եկեղեցիների (բացառությամբ ս. Սարգիս եկեղեցու) իշխանները՝ խոջա Ռուհիջանի և մյուսների գլխավորությամբ, հնարավոր էր եղել միայն վեզիր քյահյասին, բոստանջիբաշուն և սուբաշուն կաշառք տալուց հետո: Իր բաժինն էր ստացել նաև կադին, որն արձանագրել էր, թե, իբր, Թովման վախճանվել է իր մահով, և այս՝ «խորհրդեամբ փաշային քեհեայի եղեւ եւ սուպաշուն»,_ գրում է Ե. Քյոմուրճյանը[5]: 1666 թ. վեզիր քյահյասըն բացահայտ

---

[2] Գաղթական բազմությունները սպառնում էին մայրաքաղաքի բնականոն կյանքին՝ առաջացնելով պարենային մատակարարման և առողջապահության հետ կապվող լուրջ դժվարություններ: XVI դ. թուրք հեղինակ Ֆերիդուն բեյի «Սուլթանների գրություններ» երկում զետեղված մի ֆերմանից երևում է, որ օսմանյան իշխանությունները բավական ջանքեր են գործադրել ապօրինի բնակություն հաստատած մարդկանց մայրաքաղաքից վտարելու և գաղթականների հոսքը կասեցնելու նպատակով (տե՛ս Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Բ (կազմ. ***Սաֆրաստյան Ա. Խ.),*** Ե., 1964, էջ 223): Նույնը կրկնվեց 1609 և 1635 թվականներին, երբ Կոստանդնուպոլսից և օսմանյան այլ քաղաքներից բռնի տեղահանվեցին բազմահազար գաղթականներ (***Միրունի*** Հ.Ճ., Պոլիս եւ իր դերը (1453-1800), հ. 1, Բեյրութ, 1965, էջ 333: Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ, Երուսաղէմ, 1915, էջ 148-149, Բանասէր, հ. Զ,Փարիզ, 1904, էջ 174 և այլն):

[3] ***Ինճիճեան Ղ.,*** Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, Վենետիկ, 1904, էջ 22:

[4] XVII դ. Ստամբուլը բաժանվում էր 4 կադիության՝ բուն Կոստանդնուպոլիսը (Ստամբուլ), Էյուբը, Ղալաթիան և Սկյուտարը: Սրանցից յուրաքանչյուրն ուներ իր առանձին կադին՝ իր դատավարչական կառույցներով և պաշտոնյա-ծառայողներով (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. 4, ***Էվլիյա Չելեբի,*** Ե., 1967, էջ 34):

[5] Օրագրութիւն Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեանի (հրատ. Մ. արք. Նշանեան), Երուսաղէմ, 1939, էջ 291: Այսուհետև՝ Օրագրութիւն:

առևտուր էր անում Եղիազարի հովանավոր Ապրո Չելեպու հետ՝ Երուսաղեմի պատրիարքական բերաթը Եղիազարին, և ոչ թե Մարտիրոսին շնորհելու համար: Ապրոյի դիրքն ու ազդեցությունը արքունիքում և դրան միացրած՝ նրա 40 աքչեն ավելի ծանր դուրս եկան, քան Մարտիրոսի խոստացած 60 աքչեն, և բերաթը ստացավ Եղիազարը՝ փոխարինելով Երուսաղեմի պատրիարք Աստվածատուրին: Դրանից մեկ տարի առաջ՝ 1665 թ., Ապրոն ստացել էր Եղիազարի կաթողիկոսական բերաթը՝ տարեկան 25 հազար աքչե վճարելու պայմանով, ինչպես և, դարձյալ կաշառքի ուժով, իր հովանավորյալի համար ձեռք էր բերել Երուսաղեմի խնամակալության բերաթը, որով, փաստորեն չեզոքացվել էին Աստվածատուրի պատրիարքությունը և Մարտիրոսի տեղապահությունը[6]:

Ամենազոր կաշառքը ի վիճակի էր նույնիսկ շրջանցել տալ հարկային պարտականությունները, որ, ի դեպ, բավական զարմանալի մի բան էր, քանի որ հայտնի է օսմանյան պաշտոնյաների և առհասարակ, պետության կարծր վերաբերմունքը հարկի որևէ տեսակ զիջելու հարցում: Այս կերպ Սկյուտարի հայերը 1660 թ. սկզբներին կարողացան ազատվել ***բյուրեկճի*** հարկը վճարելուց[7]:

Օսմանյան պաշտոնեության հետ առնչվելիս ոչ մահմեդական համայնքներն արդեն իսկ նշանակալիորեն կաշկանդված էին իրենց պարտադրված՝ մահմեդական հանրային իրավունքից (շարիաթ) բխող սահմանափակումներով: Սուլթաններն առանձին ուշադրությամբ էին հետևում 2-րդ խալիֆ Օմարի մտցրած այն մի քանի սահմանափակումներին, որոնք վերաբերում էին ոչ մահմեդականներին՝ «ուղղափառների» նկատմամբ նրանց ստորադաս դիրքն ընդգծելու և, առհասարակ, պահպանելու նպատակով[8]: Օսմանյան իրավունքն այս կերպ հետևում էր եկեղեցիների նորոգման խիստ սահմանափակումներին, ոչ մահմեդականի՝ մահմեդականից տարբեր տարազ ունենալուն, գինու առևտրի, տներում չաղմկելու և բարձրաձայն չերգելու, ստրուկներ չպահելու, մահմեդականի հանդեպ «անհավատի» ընդգծված խոնարհ կեցվածքի (մահմեդականի հանդիպելիս՝ ոտքի կանգնել, զիջել ճանապարհն ու տեղը) պարտադրանքին: Նոր եկեղեցի կառուցելը հիմնականում արգելված էր, իսկ հների նորոգումը կապվում էր մեծ, ոչ քիչ դեպքերում՝ անհաղթահարելի դժվարությունների հետ: Այսուհանդերձ, եկեղեցիների նորոգումը, դրանց կից շինությունների կառուցման և վերակառուցման խնդիրները հավելյալ եկամտի աղբյուր էին պետական գանձարանի և պաշտոնեության համար: Սուլթան Սուլեյմանի 1526 թ. մի հրամանագրով, որ վերաբերում է Սուլու մանաստրի (ս. Գեորգ) հայկական եկեղեցուն, խստիվ արգելվում է, որ «Աքքերմանից եկած խմբերը»՝ ակներևաբար, հայեր, ապօրինի բնակվեն «հնուց ի վեր հիշյալ վանքին

---

[6] ***Չամչեան Մ.,*** Պատմութիւն հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 712, 708: Օրագրութիւն, էջ 344:

[7] Օրագրութիւն, էջ 344:

[8] **Гордлевский В. А.** *Избранные сочинения, т. III, М., 1962, с.58.* Տե՛ս նաև Զուլալյան Մ. Կ., Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Ե., 1966, էջ 105:

պատկանող խարխուլ տներում և տեղերում»[9]: Հետաքրքիր է նույն եկեղեցուն կից կառուցված շինության վերաբերյալ 1565 թ. ֆերմանը՝ հղված Կոստանդնուպոլսի կաղիին: Եկեղեցու մերձակայքում գտնվող Աբդի Չելեբի մզկիթի հավատացյալները պահանջել էին, որ քանդվի Սուլու մանաստըրի մոտ հայ կրոնավորների կառուցած նոր շինությունը: Այս պահանջը նրանք հիմնավորում էին նրանով, որ իրենց պաշտամունքային արարողությունները խանգարվում են «անհավատների» խրախճանքներից առաջացած աղմուկից: Ֆերմանով հրամայվում է քննել այդ գործը և այդուհետև այդտեղ արգելել որևէ խրախճանք և երաժշտություն[10]: Հույների, ինչպես և հայերի որոշ եկեղեցիների քանդումը ևս կապվում էր մահմեդական թաղերին կից բնակվող քրիստոնյաներին քշելու նպատակի կամ պաշտոնեության սարքած խարդավանքների հետ:

Հայտնի չէ՝ արդյոք այս անգամ քանդվել էին ս. Գեորգին կից շինությունները. հայտնի է, սակայն, որ XVII դ., Գրիգոր Դարանաղցու ժամանակ, այստեղ քանդվել են ճիշտ այդպիսի շինություններ, որի համար վերջինս մեղադրում էր միայն իր շահերին հետամուտ և եկեղեցու հոգսերին անտարբեր պոլսաբնակ հոգևորականությանը. «Ի սուրբ Գէորգն շինած օտաներն թողին, որ քակեցաւ, որ բնական աթոռ եւ վանք եւ անապատ էր միաբանից»,- գրում է նա[11]:

Եկեղեցիների չափերի ստուգումները քրիստոնյա հպատակներից դրամ շորթելու սովորական միջոց էին: Կոստանդնուպոլսում XVII դ. նման ստուգումները (թեֆթիշ), ինչպես և տների, սրանց բնակիչների ցուցակագրումն ու վերահսկողությունն իրականացնում էր սուբաշին. «Եւ սուպաշին առնէր հրաման եւ գրէր զամենայն տունս հայոց որք ժամանակաւ առեալ էին ի տաճկաց եւ երթայր ի թէֆթիշ եւ հանէր վասն որոյ եւ առեալ կաշառս, ապա թոյլ տար եթէ յայրեալ տեղիս զայս առէր եւ թէ ի Սուլու մանաստըր»,- գրում է Երեմիա Քյոմուրճյանը[12]: Իր մի թղթում այս հեղինակը հիշատակում է Կոստանդնուպոլսում ռուսաց եկեղեցի կառուցելու պատմությունը, որտեղ օսմանյան պաշտոնեությունը երևում է իր բնութագրական գծերով: Ռուսաց դեսպանը 1682 թ. կամ դրանից առաջ գալիս է մայրաքաղաք՝ նվերներով հանդերձ և իջևանում հունական Ֆեներ թաղամասում: Սուլթանից նա խնդրում է ուղղափառ եկեղեցի կառուցել Գում գաբուում՝ «կոչեցեալ սուրբ Աստուածածին»: Թույլտվությունը ձեռք է բերվում և բավարարված դեսպանը մեկնում է Մոսկվա: Իսկ երբ եկեղեցին կառուցվում է, մեծ վեզիրը սկսում է խստություններ բանեցնել: Ստուգել է տալիս շինության բարձրությունը, երկարությունն ու լայնքը (որոնք խիստ կանոնարկված էին օսմանյան օրենքներով)՝ հույներին ակնհայտորեն հասկացնել տալով, որ

---

[9] ***Պէրպէրեան Հ.,*** Օսմանեան քանի մը վաւերագիր Իսթանպուլի հայոց եկեղեցիներէն ոմանց մասին (Հանդէս ամսօրեայ, 1961, N 10-12, էջ 723-731):

[10] Նույն տեղում, էջ 727-728, տե՛ս նաև ***Փափազյան Ավ.,*** Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (16-19-րդ դարեր), Ե., 1999, էջ 211-212:

[11] Ժամանակագրութիւն ***Գրիգոր*** վարդապետի Կամախեցւոյ, էջ 495:

[12] Օրագրութիւն, էջ 394:

փոխհատուցում է ակնկալում. «Յոյնք իմացեալ զխորամանկութիւն նորա, որ վասն կաշառոյ ընդդիմանայր, ծածկապէս ետուն դրամ որքան եւ նա պահանջեաց եւ ապա բանալ ետ զեկեղեցին»,- գրում է Քյոմուրճյանը[13]:

Մահմեդականների գերակայությունը այլադավանների հանդեպ ի հայտ էր գալիս շինարարության հետ կապվող բնագավառներում ևս, որ ամրագրվում էր օրենքով: Վերջիններիս ստորակարգ վիճակը հրապարակայնորեն ի տես դնելու նպատակ էր հետապնդում, օրինակ, թուրք պատմագիր Շանի զաղեի մեջբերած մի կանոնագիրը: Այնտեղ արձանագրված է, որ «Քարուկիր շենքերի կառուցումը միայն մուսուլմաններին է վերաբերում, իսկ ռայաներին երբեք չի թույլատրվում»[14]: Կանոնագիրը, միաժամանակ, ենթադրում էր որևէ պահի անարգել քանդելը ոչ մահմեդականների տները՝ նրանց արտաքսելու կամ նրանց տների տեղում մահմեդականների շինություններ կառուցելու համար:

Ըստ էության, շարիաթի տրամադրություններից էին բխում սուլթանների՝ պարբերաբար վերահաստատվող քաղաքացիական այն նորմերը, որոնք կրոնական հանրություններին պարտադրում էին տարազի՝ հագուստի, փաթթոցների (չալմա), կոշիկների և դրանց տեսակների, գույների ու որակի որոշակի համակարգեր: Մահմեդականներին վերապահվում էին «բարձրակարգ»՝ նախընտրելի գույներ ու հագուստներ, ոչ մահմեդականներին՝ համապատասխանաբար, «ստորակարգը»: Տարազի ու գույների տարբերությունը ուներ եռաստիճան համակարգ. նախ, տարբերությունը մահմեդականների ու ոչ մահմեդականների միջև, այնուհետև, տարբերությունը ոչ մահմեդական հանրություններից յուրաքանչյուրի միջև, և, ի վերջո, տարբերությունը բուն իսկ մահմեդական հանրության մեջ: Առաջին դեպքում տարբերությունը ի հայտ էր գալիս որպես կրոնական խտրականության և հակամարտության դրսևորում:Երկրորդ դեպքում տարբերությունը հանգում էր յուրաքանչյուր միլեթին տրված կամ նրան ամրագրված հատկանիշի՝ նրանցից յուրաքանչյուրին որոշակիորեն տարբերելու իմաստով: Վերջին դեպքում տարազի և գույների տարբերությունը, ի հայտ գալով մահմեդական հանրության ներսում, վերածվում էր նրա անդամների սոցիալական ու հասարակական դիրքը բնութագրող գործոնի, որը մասնավորապես, ընդգծվում էր օսմանյան աշխարհիկ-թեոկրատական բյուրոկրատիայի միջավայրում:

Մահմեդականների նախընտրած կամ նրանց վերապահված հագուստի գույներն էին սպիտակը, կանաչը, ծիրանագույնը, վառ կարմիրը: Գույներով տարբերակվում էին նաև օսմանյան պաշտոնյաները: Մեծ վեզիրը հագնում էր սպիտակ, վեզիրները՝ կանաչ, պալատի պաշտոնյաները՝ վառ կարմիր, ուլեմները՝ մանիշակագույն, մուֆտին՝ սպիտակ հագուստներ[15]: Տարբեր էին կոշիկների տեսակներն ու գույները: Հագուստների ու գույների այս գամմայի համեմատությամբ շատ ավելի աղքատիկ տեսք ունեին ոչ մահմեդականներին

[13] Նույն տեղում, էջ 428:

[14] Թուրքական աղբյուրները, հ. Բ, էջ 251:

[15] **Babinger F.** *,Mehmed the Conqueror and his time, Princeton – New Jersey, 1978, p. 441.*

պարտադրած տեսականին կազմող կապույտ, մոխրագույն, սև և առհասարակ, գորշ գույները: Սուլթան Սելիմ Ա-ի օրենքներում տարբերակվում են տարազը, դրա որակը, գույները և գները: Բարձր էին գնահատվում այծի կարմիր և վարդագույն կաշիները. այդ գույներով կոշիկները, որ իրավունք ունեին հագնելու միայն մահմեդականները, արժեին 18-30 աքչե: Բարձրաստիճան պաշտոնյաները հագնում էին կանաչ, պալատականները՝ վառ կարմիր գույնի կոշիկներ: Ոչ մահմեդականների գույները ևս նպաստում էին նրանց ճանաչելու հասարակության մեջ. հույներին վերապահվել էր սևը, հայերին՝ մանիշակագույնը, հրեաներին՝ կապույտը և այլն[16]: Ընդ որում, այս և ոչ էլիտար գույները ոչ մահմեդականներին տարբեր դարաշրջաններում պարտադրվել են որոշ փոփոխություններով. սև և գորշ գույները պարտադրվում էին մերթ հրեաներին, մերթ հայերին և մերթ՝ հույներին: Մեհմեդ Ֆաթիհի ժամանակ հրեաների գլխարկը պետք է լիներ կարմիր, կոշիկները՝ սև, իսկ վերնազգեստը պետք է կարված լիներ աստառի կտորից. քրիստոնյաները պետք է դնեին սև գլխարկ, ինչին հետևելը պարտադիր է համարվում շատ ավելի ուշ շրջանի՝ 1580 թ., մի ֆերմանում՝ ուղղված Կոստանդնուպոլսի կադիին[17]:

1568 թ. ֆերմանում հրեաներին ամրագրվում էր սև հագուստ, կիսով չափ վարդագույն, կիսով չափ՝ կարմիր փաթթոց: Հայերը ևս պետք է հագնվեին հրեաների նման, բայց դնեին կարմրախայտ փաթթոց, միայն թե ոչ բարձրարժեք[18]: 1583 թ. Մուրադ Գ-ի մի ֆերմանով հրամայվում էր պահպանել հագուստի տեսակների և գույների հետևյալ կերպը. հրեաները՝ նարնջագույն, հույները՝ կապույտ և հայերը՝ ծաղկանկար: Պարտադրվել էր դնել չուխայի կտորից կարված ծանր գդակներ, բայց բռնադատվածները դրանից ազատվեցին 40-50 ոսկի վճարելով և «զերծան ի նեղիչ գլխանոցաց անտի»[19]:

Նույն կերպ, տարբերվելու էին մահմեդական և քրիստոնյա կանանց հագուստների ձևը, որակը և գույները: Մահմեդական կանայք՝ վառ, գույնզգույն գործվածքներով հագուստ, հիմնականում՝ կանաչ, վառ կարմիր, նարնջագույն, երկնագույն: Քրիստոնյա կանայք՝ մուգ դարչնագույն, մոխրագույն և այլ գորշ գույներ, մոխրագույն կոշիկներ[20]:

Օսմանյան վերնախավը և մոլեռանդ մահմեդականները ձգտում էին, որ այլահավատները առաջին իսկ հայացքից խստիվ տարբերվեին իրենցից՝ հենց արտաքինից սկսած, ուստի առաջնակարգ նշանակություն էր տրվում փաթթոցին: Իրենց հերթին, այլահավատները, մանավանդ Կոստանդնուպոլսում, չնայած նախատեսված գդակին (կալփախ), չալմա էին դնում, անշուշտ, ձգտելով նվազագույնի հասցնել իրենց և մահմեդականների համապատասխան

---

[16] **Kinross L.,** *The Ottoman Centuries. The Rise and Fall of the Turkish Empire, London, 1977, p. 142-143.*

[17] ***Փափազյան Ավ.,*** նշվ. աշխ., էջ 222-223:

[18] Նույն տեղում, էջ 214-215:

[19] ***Այվազովսկի Գ.,*** Պատմութիւն Օսմանեան պետութեան, հ. Ա, Վենետիկ, 1841, էջ 442-443:

[20] **Van Lennep H. Y.,** *The Oriental Album, N. Y., 1862, p. 113.*

տարբերությունները։ Այս պատճառով էլ սուլթանները գույներ պարտադրելուց բացի, հաճախ ֆերմաններ են արձակել առհասարակ չալման քրիստոնյաներին արգելելու և միայն գդակ դնելու մասին։ Այս արգելքի վերաբերյալ ֆերմաններ է հրապարակել սուլթան Մուրադը 1580 թ., երբ, ինչպես գրում է Անդրեաս Եվդոկեցին, «առին զալաճայ գոտին (մետաքսե գույնզգույն գործվածքից չալմա - Ա. Խ.) ի գլխնուս և գտակ մորթի դնել տուին»[21], և 1581 թ., երբ նույն սուլթանը «տուլպանդ (չալմա - Ա. Խ.) ի գլխնուն ի վայր ձգել ասախ (արգելք -Ա. Խ.) արաւ»[22]։

Այս արգելքը կրկնվել է 1583 և 1587 թթ., երբ, ինչպես վկայում է գրիչ Մարտիրոսը, սուլթանը հրամայել էր սև գդակ դնել բոլոր քրիստոնյաներին[23]։ «Յասախների» (արգելքների) կրկնությունը վկայում է, որ կաշառքների միջոցով ոչ մահմեդականները կարողացել են մի որոշ ժամանակ շրջանցել արգելքը, մինչև արգելքի հաջորդ հրամանը և այսպես շարունակ։ Համենայնդեպս, վերոհիշյալ արգելքը ուժի մեջ մնաց երկու տասնամյակից ավելի, «զոր եդեալ էր հայրն սորա (սուլթան Մեհմեդի - Ա. Խ.) սուլթան Մուրատ առ ի նախատինս քրիստոնէից ի թվին ՌԼ (1581) ԺԶ (26) ամ այնպէս կացին ի կնդութիւն»[24]։

XVII դ. ևս քանիցս վերարձակվեցին «անհավատներին» իրենց տեղը ցույց տվող սուլթանական ֆերմանները։ 1656 թ., ինչպես վկայում է Երեմիա Քյոմուրճյանը, հայերին արգելվեց հագնել դեղին գույնի մուճակ, գունավոր հագուստներ և դնել մետաքսե փաթթոցներ[25]։ Դեղին կոշիկներ հագնելը, ի դեպ, համարվում էր այլահավատի կողմից մահմեդականին հասցված լուրջ նվաստացում։ 1662 թ. սեպտեմբերի 16-ին սուլթան Մեհեմեդ Դ-ն հայտնվում է հայաբնակ Վլանկա թաղում, որտեղ ձերբակալել է տալիս թեև հնամաշ, բայց դեղին մուճակ հագած մի հյուսնի։ Բռնվածին գլխատում են, իսկ մուճակը զցում դիակի վրա[26]։ Հետաքրքիր է սրան առնչվող՝ դրանից ոչ շատ առաջ Թուրքիայում ճանապարհորդող ֆրանսիացի Ժ. Թեվանոյի դիտարկումը. «Քրիստոնյաները,- գրում է նա,- չպետք է համարձակվեն ամբողջովին սպիտակ չալմա դնել, իսկ եթե դնեն՝ ապա պետք է տաճկանան կամ մեռնեն. բայց նրանք կարող են հագնել մյուս բոլոր գույներով հագուստներ, թեև, այսուհանդերձ, վտանգավոր է հագնել կարմիր

---

[21] Մանր ժամանակագրութիւններ XIII-XVIII դդ., հ. 1 (կազմ. ***Հակոբյան Վ.***), Ե., 1951, էջ 159։

[22] Մ. Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. N 7273, էջ 66։

[23] ***Ոսկեան Հ.,*** Կ. Պոլսոյ Պետական Հնախօսական թանգարանին մատենադարանին Աւագ Մաշտոց ձեռագիրը (Հանդէս ամսօրեայ, 1967, N 1-3, էջ 47)։

[24] Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. 2 (կազմ. Պողարեան Ն.), Երուսաղէմ, 1967, էջ 51։

[25] Օրագրութիւն, էջ 169։

[26] Նույն տեղում, էջ 399-400։ Այս դեպքի մասին, որոշ գունազարդումներով, հիշում է նաև Պ. Ռայկոտը (Տե՛ս Rycaut P., The History of the Turkish Empire, London, MDCLXXX, p. 91)։

կամ դեղին գույներովը, որովհետև զինվորները սիրում են այդ գույնի զգեստները»[27]:

Պետք է նկատել, որ յասախների միջև ընկած ժամանակաշրջանում, երբ թուլանում էր իշխանությունների և պահպանողական միջավայրի հսկողությունը, սկսվում էին խախտումները, որ իրենց թույլ էին տալիս այլահավատների վերնախավերը: Հասարակ ժողովուրդն ի վիճակի չէր ո՛չ լավ հագնվելու և ոչ էլ շրջանցելու սահմանված կարգուկանոնն ու արգելքները, որի համար, ինչպես հայտնի է, բավական դրամ էր հարկավոր և՛ հագուստի, և՛ իշխանություններին կաշառելու համար: 1577 թ. գերմանական դեսպանատնից Ստեֆան ֆոն Գեռլախը[28] այսպես է նկարագրում պոլսեցի հայ, անտարակույս՝ հարուստ, կանանց տարազը 1580 թ. արգելքից առաջ. «Իրենց (հայերի - Ա. Խ.) կիները բոլորովին թուրք կիներու ձևով հագուած դուրս կելնեն եւ ինչ-որ իրենց լաւ կը վայելէ, սա է, որ անոնք երեսնին սև շղարշով մը կը ծածկեն: Այս շղարշը ամբողջ ոսկիով բանուած է ... Նաև իրենց գլուխները ծանրագին կերպասներով կը ծածկեն, որոնք իրենց գլուխն երեսի կողմը ամբողջովին զուտ ոսկէթելերով սեղմ կերպով բանուած են»[29]:

Տարազի՝ հագուստների, կոշիկների, փաթթոցների վերաբերյալ արձակած ֆերմաններով սուլթանները չէին հետամտում սոսկ շարիաթի և իրենց հեղինակության բարձրացմանը: Ոչ պակաս կարևորն այստեղ այն էր, որ արգելքներն ամենից առաջ նպատակ ունեին պահպանելու կայսրության պետական-վարչական աստիճանակարգային կառուցվածքը, ինչպես և երկրում «անհավատների» սոցիալական կարգավիճակը: Արգելքներն այս իմաստով նպաստում էին այդ կարգավիճակի վերահաստատմանը՝ իբրև դրան ուղղված իրավական կանխարգելիչ գործողությունների համակարգ[30]: Կար, անշուշտ, նաև

---

[27] *Armenians in the Ottoman Empire. An Anthology of Transformation 13th - 19th Centuries (Edited with an Introduction and notes by V. Ghazarian), Waltham, Massachusetts, 1997, p. 88.*

[28] Ս. ֆոն Գեռլախը Հռոմեական Սրբազան Կայսրության դեսպանության աշխատակիցն էր Թուրքիայում՝ 1573-1578 թթ.: 1674 թ. Ֆրանկֆուրտում հրատարակվել են նրա նոթերն այդ երկրում իր անցկացրած տարիների մասին: Ուշագրավ են նրա անդրադարձները Կոստանդնուպոլսի հայերի վերաբերյալ (տե՛ս **Гордлевский В. А.,** նշվ. աշխ., էջ 554, նաև՝ ***Հնասէր Գ.,*** Հայ վաճառականներ ու արհեստաւորներ Կ. Պոլսոյ մէջ (Հայաստանի կոչնակ, 1928, N 48, էջ 1515):

[29] ***Հնասէր Գ.,*** նշվ. աշխ., էջ 1516:

[30] Թուրքական հետազոտողներից Հ. Ինալջըքը նվազագույնի է հասցնում տարազի և գույների հարցում ոչ մահմեդականների նկատմամբ կիրառվող խտրականությունը՝ այն համարելով գրեթե պատահական իրողություն. «Մահմեդական և ոչ մահմեդական առևտրականներն ու արհեստավորները փաստորեն պատկանում էին միևնույն դասակարգին և օգտվում նույն իրավունքներից, որչափով հարուստ հրեա, հույն և հայ վաճառականները հագնվում և իրենց պահում էին մահմեդականների նման: Ժամանակ առ ժամանակ սուլթանները փորձում էին կատարել շարիաթի սահմանումները՝ հրապարակելով արգելող օրենքներ՝ ոչ մահմեդականներին կրելու նույն հագուստները, ինչ մահմեդականները... չունենալ ստրուկներ կամ ձի չհեծնել, բայց այդ որոշումները մնում էին ոչ արդյունավետ»,_ գրում է նա (**Inalcik H.,** The Ottoman Empire. 1300-1600. New York - Washington, 1973, p. 151) : Այստեղ գլխիվայր է շրջված իրողությունը. սուլթանները, ընդհակառակն, «ժամանակ առ ժամանակ» էին անտեսում

հարցի տնտեսական կողմը. համեմատաբար թանկ կամ շատ թանկ գործվածքներով ու նախընտրելի գույներով հագուստներն ու կոշիկները վերապահելով միայն մահմեդականներին՝ օսմանյան իշխանությունները ձգտում էին բազմամարդ մահմեդական միջին խավերին մատչելի մակարդակի վրա պահել շուկայի գները: Սակայն, երբ ոչ մահմեդական միլեթները ևս, վերահսկողությունը թուլանալու կամ անտեսելու պայմաններում գնում էին որակյալ հագուստներ և կոշիկներ, արհեստավորաառևտրական շուկան ընդլայնվում էր մեծ չափերով՝ պահանջարկի մեծացման համեմատ աճում էին գները՝ ի վնաս բոլոր, այդ թվում և մահմեդական գնորդների: 1568 թ. մի ֆերմանում նշվում է, որ «անհավատների» կողմից սիփահիների և այլ մահմեդականների նման թանկարժեք հագուստներ ու մաշիկներ հագնելը «շատ է բարձրացրել գործվածքների, մահուդե կերպասների և կոշկեղենի գինը»[31]:

Պակաս ահեղ պատիժներ չէին սպասում այն ոչ մահմեդականներին, որոնք հանդգնում էին սիրային հարաբերություններ հաստատել մահմեդական կնոջ հետ: Այդպիսի կապեր հայտնաբերելով՝ իշխանությունները սովորաբար մահվան սպառնալիքով տղամարդուն ստիպում էին իսլամ ընդունել և ամուսնանալ ընկերուհու հետ: Այստեղ հիմնականում առկա էր պատահականության գործոնը, իսկ պատահական կապերի էին դիմում Կոստանդնուպոլսի խաներում բնակություն հաստատած եկվոր առևտրականներն ու արհեստավորները՝ կտրված իրենց տունուտեղից և ընտանիքներից: Ծանոթ չլինելով մեծ քաղաքի վարքուբարքին և անտեղյակ՝ իրենց սպառնացող վտանգներին, նրանք չափազանց թանկ էին վճարում իրենց անցողիկ հրապուրվածության դիմաց: «Թվին ՌԾԴ (1605)-ին էր, բազում ջուղայեցիք էին տաճկցեր՝ ի վերայ տաճկի կնոջ ըմբռուելով... Եւ յԸստամբօլ քանի ու քանի կան տաճկցած՝ վասն կնոջ համար»,- գրում է Գր. Դարանաղցին[32]: Առավել հաջողակ մեղանչածները մի կերպ պրծացնում էին գլուխները՝ մեծագումար տուգանք և կաշառքներ տալով: Ամուսնացած մահմեդական կնոջ հետ սիրային կապի բացահայտման դեպքում, երբ այլահավատ տղամարդը խուսափում էր իսլամ ընդունելուց, գլխատվում էր[33]: Այստեղ ևս աչքի էր զարնում ոչ մահմեդականների նկատմամբ դրսևորվող խտրական վերաբերմունքը: Իրենք՝ օսմանյան թուրքերը, լիովին ազատ էին ու կամայական՝ քրիստոնյա կամ հրեա կանանց հետ իրենց ցուցաբերած վարքագծում: Հ. Քավենդիշը, որը Կոստանդնուպոլսում էր գտնվում 1589 թ., գրում է. «Ոչ մի քրիստոնյա չի կարող որևէ կապ ունենալ թուրք կնոջ հետ և նա կսպանվի,

---

այդպիսի գրեթե մշտական սահմանափակումները: Միայն XVI դ. նշված արգելքները կրկնվել են 1550 թ. առաջ, ապա 1568, 1577, 1580, 1581, 1583 և 1587 թվականներին՝ շարունակվելով նաև XVII դարում:

[31] ***Փափազյան Ավ.,*** նշվ. աշխ., էջ 215-216:

[32] Ժամանակագրութիւն **Գրիգոր** վարդապետ Կամախեցւոյ, էջ 462:

[33] **Гордлевский В. А.,** նշվ. աշխ., էջ 47:

հենց որ այդ հայտնի դառնա: Բայց թուրքը բազմաթիվ քրիստոնյա կանանց հետ կարող է վարվել այնպես, ինչպես ինքն է ցանկանում»[34]:

Այսուհանդերձ, միջնադարյան Կոստանդնուպոլսի զվարճալիքների ցանկում արհամարհելով վերահաս և մշտապես դաժան պատիժների վտանգը՝ իր կայուն ու մշտական տեղն ուներ մարմնավաճառությունը[35]: Մարմնավաճառներն ապրում էին Ֆաթիմայի մզկիթի մոտ, պտտվում մեյխանաների (սրճարաններ) շրջակայքում և մասնակցում աչքից հեռու ընկած թեթևաբարո հաստատություններում եռացող գինարբուքներին: Երբեմն-երբեմն սրանց դեմ շուրջկալներ էին կազմակերպում, բանտարկում էին կամ արտաքսում քաղաքից և կամ էլ գցելով պարկի մեջ՝ նետում էին Բոսֆորի ջրերը[36]:

Օսմանյան մայրաքաղաքում կային նաև աշխարհիկ այլ վայելքներ, որոնց տրվելը վտանգավոր էր և մահմեդականների, և ոչ մահմեդականների համար: Խոսքը վերաբերում է ոգելից խմիչքներին, սուրճին ու ծխախոտին, որոնց գործածության թույլտվությունը կայսրությունում ձեռք է բերվել հարյուրամյակների ընթացքում: Հայտնի են 1563, 1579-1580 թթ. և այլ տարիների արգելքները գինու վաճառքի, ինչպես նաև գինետները փակելու վերաբերյալ[37]: Այս դեպքում ևս արգելքները պարբերաբար կրկնվել են՝ շարունակվելով հաջորդ դարերում: 1653 թ. դեկտեմբերին հրատարակված ֆերմանով կարգադրվում էր առհասարակ փակել այն սրճարաններն ու գինետները, որտեղ վաճառվում էր թաթարական ոգելից խմիչք՝ բուզա[38]: Ֆերմանի տեքստից երևում է, որ դրանից առաջ ևս նույն բնույթի ֆերման է հրապարակվել, բայց գինետներն ու սրճարանները վերստին սկսել էին գործել՝ շարունակելով իրենց առևտուրը և տեղի տալով հասարակական կարգուկանոնի խախտումների:

Գինու առևտրով մեյխանաներում զբաղվում էին քրիստոնյաներն ու հրեաները՝ վճարելով նույնանուն ***մեյխանե*** հարկը[39]: Մեհմեդի ժամանակվա մի

---

[34] *Armenians in the Ottoman Empire, p. 53.*

[35] XVI դ. վերջերի անգլիացի ճանապարհորդ Ջ. Սանդերսոնը Կոստանդնուպոլսում հաշվում էր 1000 պոռնիկ՝ ամեն ցեղից (*Armenians in the Ottoman Empire, p. 57.)*

[36] Սելիմ Ա-ի օրենքներից մեկում նկատելի է շարիաթի նորմերի գաղափարախոսությունը անառակությամբ զբաղվողների դեմ. «Եթե որևէ մեկը անառակություն է անում և (դա) հաստատվում է շարիաթով, ապա, եթե անառակություն անողը ամուսնացած է և այնքան ունևոր, որ նրա կարողությունը հասնում է 600 աքչեի կամ ավելիի, և եթե նա հրապարակավ չի պատժվում, թող նրան տուգանեն 400 աքչե, եթե միջակ կարողության տեր է՝ 200 աքչե, եթե ավելի նվազ է ... 40 աքչե, իսկ եթե չքավոր է՝ 30 աքչե:

Եթե անառակություն անողը ամուրի է և հարուստ, նրան պետք է տուգանել 100 աքչե, եթե միջակ կարողություն ունի՝ 50 աքչե, եթե աղքատ է՝ թող նրանից առնեն 30 աքչե:

Եթե անառակություն անողը կին է և հարուստ, ապա նրանից այնքան տուգանք է առնվում, որքան և հարուստ տղամարդուց, եթե միջակ կարողություն ունի կամ աղքատ է՝ ըստ կարողության չափի» (*Книга законов султана Селима I, публикация текста, перевод, терминологические комментарии и предисловие Тверитиновой А.С., М., 1969, с. 31).*

[37] ***Փափազյան Ակ.,*** նշվ. աշխ., էջ 216: **Гордлевский В. А.,** նշվ. աշխ., էջ 34:

[38] ***Փափազյան Ակ.,*** նշվ. աշխ., էջ 216:

[39] **Faroghi S.,** *Towns and Townsmen of Ottoman Anatolia Trade. Crafts and Food Production in an Urban setting 1520-1650, Cambridge, 1984, p. 70.*

ֆերմանով հավաստվում է, որ հայ և հրեա գինեվաճառները իրենց այգիներից ստացված գինու դիմաց հարկ են վճարելու գինու ամեն մի ***մեդրեի*** համար (շիրայի 1 մեդրեից՝ 1 աքչե)[40]: Սահմանափակված էին գինու վաճառքի տեղերը. տակառները պետք է բացվեին միայն վերակացուների ներկայությամբ, իսկ գինին կարող էր վաճառվել միայն առևտրականների թաղերում գտնվող գինետներում: Բռնագրավելու սպառնալիքով արգելվում էր տներում գինի վաճառելը: Այս վերջին արգելքը իշխանությունների համար վերահսկելի էր դարձնում գինու շուկան՝ ոչ միայն հարկեր հավաքելու, այլև գինու վաճառքի պետական մենաշնորհին ապահովելու իմաստով: Սուլթանական գանձատունը գինու մենաշնորհը պահպանում էր երկու ամիս և տասը օր տևողությամբ, այդ ընթացքում գյուղացուն արգելվում էր գինու վաճառքը[41]: Գինու վաճառքը սահմանափակելուն էին ուղղված նաև թուրքերի հարկային քաղաքականության այլ դրսևորումներ. 1648 թ. մեծ վեզիր Մեհմեդ փաշան բեռնակիրների և մակույկավարների էսնաֆի հետ միասին ***քյուրեկճի*** հարկ էր սահմանել նաև գինեվաճառների համար[42], որ փաստորեն լրացուցիչ հարկման էր ենթարկում վերջիններիս:

Գինու և ոգելից այլ խմիչքների արգելքը թեև վերաբերում էր մահմեդականներին, բնականաբար, սահմանափակում էր դրանց առևտրում ներգրավված ոչ մահմեդականների գործնական հնարավորությունները: Սակայն գինու վաճառքի արգելքի հրամանագրերը նույնպես ամենուրեք խախտվում էին, մասնավորապես, մշտապես անհնազանդության հակված ենիչերիների շրջանում: Կ. Զբարաժսկին (1620-ական թթ. սկիզբ) գրում էր, որ հենց մայրաքաղաքում անհնարին է խանգարել, որ փողոցներում չխմեն և ծխախոտ չծխեն, և որ արգելքի վերաբերյալ որոշումները «վերածվել են ծաղրուծանակի»[43]: Օսմանյան մի սկզբնաղբյուրի՝ «Իբրեթնյումա»-յի (Խրատների գիրք) հեղինակ Հյուսեին Տուգին, անդրադառնալով նույն ժամանակաշրջանին, հիշում է օրինազանցներին զսպող միջոցառումները. «Բոստանջի բաշի Փիր Մեհմեդ աղան, ենիչերի աղասի Յուսուֆ աղան մշտապես փադիշահին զգեստափոխված՝ զբոսանքի էին տանում և ներխուժելով պանդոկները՝ բռնում էին շատ սիփահիների և ենիչերիների, նրանց մեծ մասին բրածեծ էին անում և որպես ազապի (ռազմանավի նավաստի - Ա. Խ.), ուղարկում թիարաններ»[44]:

Օսմանյան բանակում, սակայն, այդքան անհանդուրժող չեն եղել ոգելից խմիչքների, հատկապես թաթարական բուզայի նկատմամբ: XVII դ. երկրորդ կեսի թուրք հեղինակ Հյուսեին Հեզարֆենը հայտնում է, որ արշավանքների ժամանակ

---

[40] ***Փափազյան Ավ.,*** նշվ. աշխ., էջ 130, 163: Մեդրե՝ գինու քանակի միավոր: Կոստանդնուպոլսում 1 մեդրեն կազմում էր 6 օխա (ծանրության միավոր. 1 օխան հավասար էր 4,282 կգ) *(Книга законов султана Селима I, с. 76, 77):*

[41] *Османская империя и страны Центральной, Восточной и Юго-восточной Европы в XV-XVII вв., М., 1984, с. 232.*

[42] Օրագրութիւն, էջ 6-7:

[43] *О состоянии Оттоманской империи и её войска (замечания князя* ***К. Збаражского,*** *посла в Турции). В кн.: Османская империя в первой четверти XVII века, М., 1984, с.160.*

[44] Նույն տեղում, էջ 80:

բանակին ուղեկցող արհեստավորների և սպասարկող այլ խմբերի մեջ կային բավական թվով բուզա վաճառողներ[45]: Բուն Կոստանդնուպոլսում գրեթե միշտ արգելվում կամ սահմանափակվում էր գինու վաճառքը: Նման դեպքերում ևս կաշառքը կատարում էր իր համոզիչ դերը: 1656 թ. այդպիսի մի արգելքի ժամանակ «գնացին մեծամեծք գինեվաճառացն յայս կոյս եւ յայն կոյս անկանելով եւ դրամ խարճելով հազիւ զայս (արգելքը-Ա.Խ.) վերուցին»[46]: Մայրաքաղաքում գինեվաճառությունը հետապնդվող զբաղմունք էր մնում նաև XVII դ. վերջին ու XVIII դ. առաջին կեսին: Ֆրանսիացի դը Լա Մոտրեն (Կոստանդնուպոլսում էր 1699 թ. սկզբներին) իր ուղեգրության մեջ նշում է, որ Կոստանդնուպոլսում արգելված է գինու վաճառքը, և որ այդ կարելի է անել միայն դեսպանների հովանավորությամբ: Եվ քանի որ այդպիսի հովանավորությունը նվերներ արժեր, առևտրականներն իրենց գինին վաճառում էին կրկնակի գնով: Թուրքերին, շարունակում է նա, գինի խմելը թեև արգելված է, բայց ամենից շատ նրանք են խմում, նույնիսկ պաշտոնյաները, որոնք բռնվելուց հետո պատժվում էին ֆալախայով[47]: Ոչ մահմեդականի նկատմամբ արգելքն այդքան խիստ չէր գործում, ավելին, բարոյապես էր տարածվում նրանց վրա, որովհետև խոսքը վերաբերում էր շարիաթի ուժով մահմեդականին պարտադրված նորմերին: Սակայն տոն տվողը այդ նորմերն էին, ուստի, այստեղ տուժում էին հույն, հայ և սլավոն առևտրականները: Հասնում էր նաև վայելքները գնահատող ոչ մահմեդականներին: Կոստանդնուպոլսում մի այդպիսի աշխարհասեր երեց 1671 թ. գրում է իր հիշատակարանում. «զգինետներն ջարդեցին, և զգինին յասախ արին՝ թէ հարամ, երանի գտնող խմողին»[48]:

Մահմեդականներին չգայթակղելու համար ոգելից խմիչքների ամեն մի արգելքին զուգահեռ, խստիվ պատվերներ էին տրվում միլեթների գլխավորներին՝ գինի և օղի վաճառել միայն մեյխանաներում, թաղի իշխանությունների հսկողության ներքո: Ամեն մի հերթական արգելքից հետո մահմեդականները դառնում էին սովորականից ավելի զուսպ և զգույշ՝ խուսափելով գինետներից, որտեղ կարող էին բռնվել ենիչերիների կողմից և պատժվել: Խմելու ցանկությունը, սակայն, ֆերմաններով չէր վերացվում և գինեսեր թուրքերը խմիչքը ձեռք էին բերում այլահավատների տներից: Այս դեպքում օրենքը խախտվում էր երկուստեք՝ «գյավուրներն» իրավունք չունեին տներից վաճառք կատարելու, իսկ «ուղղափառները»՝ գնելու: Այս խախտումներին վերջ տալու նպատակով իշխանությունները, ընդհուպ մինչև մահվան սպառնալիքը, այլահավատներին արգելում էին տներում գինի վաճառել: Պատրիարք Դանիելը (1799-1800) իր մի գրությամբ քահանաներին և ավագերեց աթոռակալներին խստիվ պատվիրում էր

---

[45] *Османская империя. Государственная власть и социально-политическая структура. М., 1990, с. 276-277.*

[46] Օրագրութիւն, էջ 211:

[47] Ա. տը Լա Մոթռէի ուղեգրութենէն՝ հայոց մասին (Հայրենիք, Բոստոն, 1950, N 6, էջ 99):

[48] Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. VIII (կազմ. ***Պողարեան Ն.),*** Երուսաղէմ, 1977, էջ 50:

կատարել վերջին յասախի բոլոր հրահանգները։ Այդ գրությունն ուշագրավ է այն տեսակետից, որ պատկերացումներ է տալիս արգելքի ֆերմանը իրացնելու հանգամանքների մասին. «Ի մէջ եկեղեցւոյ,- հայտնում է նա,- ծանուցմամբ պատուիրեսջիք քրիստոսասէր ժողովրդոց, արանց եւ կանանց ամենեցուն, որ ահա առ մեզ արքունական դրանէն սաստիկ թէմպէհիւ ֆէրման եկն վասն մեյխանայից եւ գինի ըրախի ծախելոյ յասախին, զի մի՛ ոք այսուհետեւ համարձակեսցի տուներէն գինի ըրախի ծախել ... վասն որոյ ահա ի գրելս մեր պարտիք եւ դուք սաստիկ պատուիրմամբ ծանուցանել ամենեցուն, որ ինքեանք մէյխանան չի մտանեն եւ չելանեն եւ ունեցողներին (գինի և օղի - Ա. Խ) մարդ տներին չի տանին խմցնեն կամ փարայով չի ծախեն, զի մի՛ անհնազանդ գտանելով պատժեսցին։ Քանզի սաստկութեամբ ի մէջ ֆէրմանին մահացուցանել խոստացեալ է»[49]։

Դրանից մեկ-երկու հարյուրամյակ առաջ ևս պոլսահայերի չափավորությունը մնում էր պատրիարքների մտահոգության առարկան, թեև պետք է նկատել, ոչ բոլոր պատրիարքների, որոնք իրենց բարքերով ու բարոյականությամբ հազիվ թե օրինակ ծառայեին իրենց ժողովրդին։ Այս տեսակետից ուշագրավ են XVII դ. երկրորդ կեսին պատրիարք Եղիազարի գործադրած ջանքերը անկարգ կրոնավորների սանձերը քաշելու, նրանց՝ մեյխանաներ այցելելն արգելելու գործում։ Նույն նկատառումներով, նա արգելեց հարսանիքներին մահմեդական և հրեա նվագածուներ հրավիրելը, գինու չարաշահումը և այլն։ Զուսպ բարքերի պահպանությունն էին հետամտում նաև Եղիազարի հրահանգները՝ հոգեհացը տալ միայն տներում և ոչ թե «ի գինեծախ տեղիս», որտեղ հանգուցյալին տրվող հարգանքի տուրքը կարող էր վերածվել գինարբուքի[50]։

Անշուշտ, Եղիազարի ջանքերը պայմանավորված էին համայնքում ազգային բարոյականության ու առաքինության պահպանության նախանձախնդրությամբ։ Սակայն նշանակություն ուներ նաև մահմեդական անհանդուրժողականության միջավայրը, որը որևէ պահի կարող էր ի չարը գործադրել «անհավատների» զվարճասիրական ծայրահեղությունները պատժելու իր իրավունքը՝ ընդհուպ մինչև նրանց պատկանող շինությունները քանդելը կամ խլելը։

Ոգելից խմիչքների հետ միասին օսմանյան իշխանությունները բազմիցս արգելել են սուրճի և ծխախոտի գործածությունը, սահմանափակել կամ վերացրել դրանց ներմուծումն ու վաճառքը։ XVI-XVII դդ. ծխախոտը Թուրքիա էր ներմուծվում Եվրոպայից, և այս ժամանակներում, ինչպես գրում է Նաիման, ավելի շատ էր տարածում գտել բնակչության մեջ, քան նախորդ շրջաններում և դարձել սուր վեճերի առարկա[51], առաջացնելով օսմանյան հասարակության պահպանողական տարրերի վրդովմունքը։ Գ. Այվազովսկին գրում է, որ թուրքերի մեջ ծխելու սովորությունը մտել է 1606 թ. և դրանից հետո տարածվել, ինչպես սուրճը

[49] Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. 3, էջ 399։
[50] Օրագրութիւն, էջ 26-27։ Դիւան հայոց պատմութեան, հ. Ժ, Թիֆլիս, 1912, էջ 88։
[51] Naima, *Annals of the Turkish Empire, vol. 1, London, 1973, p. 316-317.*

և ափիոնը[52]: Ի դեպ, սուրճի մուտքը շատ ավելի վաղ էր թույլ տրվել. սուլթան Սուլեյմանի ժամանակ, 1555 թ. Կոստանդնուպոլսում կառուցվել էր խահվեխանա՝ սրճարան[53]: Հավանաբար, սրճարանի տերերը սիրիացի այն երկու եղբայրներն էին, որոնց վերագրվում է Թուրքիայում առաջինը սուրճ բերելու պատիվը[54]: Սելիմ Բ-ի և Մուրադ Գ-ի ժամանակ, XVI դ. 2-րդ կեսին, մայրաքաղաքում սրճարանների թիվը հասել էր 200-ի: Այս ժամանակներում սուրճի դիմաց գանձվում էր ***թահմիս-ի կահվե*** հարկը[55]:

Սակայն, դրանից հետո, XVII դ. սկզբներին ծխելն ու սուրճ խմելն արգելվեցին: Բարքերի ու բարոյականության վաղեմի նորմերը պահպանելու ցանկությունից ոչ պակաս չափով իշխանություններին մտահոգում էր դրանց գրգռիչ նշանակությունը, մասնավորապես, մշտապես հուզումների հակամետ ենիչերիների համար: Առաքել Դավրիժեցին գրում է, որ «Թուին ՌՁԲ (1633) յօգոստոս ամսոյ սուլթան Մուրատն սաստիկ յասախ արար ընդ ամենայն աշխարհս տէրութեան իւրոյ, զամենայն խահվէխանէք, որ յամենայն քաղաքս կային, քակեալ աւերեաց և խափանեաց, վասնզի ի ժամանակին յորում յանկիչարիքն զսուլթան Օսման սպանանին, ի ղահվէխանէքն նստեալ զսպանման խօսքն խօսէին խմելով զխահվայն և քաշելով զթութունն»[56]: Ասենք, սուլթան Մուրադ Դ-ին անհանգստացնում էին շատ ավելի ժամանակակից սպառնալիքներ, քան մի քանի տարի առաջ կատարված՝ իր նախորդին այն աշխարհ տարած միջադեպը: Հենց 1633 թ. օգոստոսին էր, որ Կոստանդնուպոլսում բռնկված հրդեհից հետո ըմբոստ տրամադրություններ էին ծայր առել բնակչության և ենիչերիների մեջ: Սրճարաններում նստած՝ ենիչերիները տաք-տաք քննարկում էին աղետի հետ կապված խնդիրները՝ չթաքցնելով իրենց հակակրանքը իշխանությունների հանդեպ: Հնարավոր խռովությունները կանխելու համար Մուրադը հատուկ ֆեթվա էր ձեռք բերել՝ մահվան սպառնալիքով արգելելով ծխելն ու սուրճ խմելը, ասել կուզի՝ մարդկանց անցանկալի կուտակումները սրճարաններում: 1634 թ. յասախը կրկնվեց, որից տուժեցին բազմաթիվ մեղանչողներ[57]: Սակայն, չնայած սաստիկ պատիժներին, ծխախոտն ու սուրճը շարունակում էին տարածվել՝ արգելված պտղի խորհրդավոր ցանցը գցելով

---

[52] *Այվազովսկի Գ.,* նշվ. աշխ., էջ 503:

[53] Նույն տեղում, էջ 401: Ինչպես նշում է անգլիացի ճանապարհորդ Ռ. Չանդլերը, Կոստանդնուպոլսում առաջին սրճարանը բացվել է 1554 թ., իսկ ինչ վերաբերում է ծխախոտին, թվում է՝ այն օսմանյան երկիր է ներմուծվել կամ սուրճի հետ միասին, կամ փոքր-ինչ ավելի ուշ: Համենայն դեպս, 1610 թ. ծխախոտն արդեն մահմեդականների բարքերին անհամատեղելի էր համարվել համապատասխան ֆերմանի ուժով: Այս հեղինակը գրում է, որ մայրաքաղաքում ծխողներին բռնում էին և ի պարսավանս բոլոր ծխողների, ման էին ածում փողոցներում՝ ծխափողերը խրած նրանց քթանցքների մեջ *(Chandler R.,Travels in Asia Minor or an Account of a Tour, Oxford, 1775, p. 195):*

[54] Гордлевский В. А., *Избранные сочинения, т. III, М., 1962, с. 33.*

[55] Faroghi S., նշվ. աշխ., էջ 71:

[56] ***Առաքել Դաւրիժեցի,*** Գիրք պատմութեան, Ե., 1990, էջ 433:

[57] ***Այվազովսկի Գ.,*** նշվ. աշխ., էջ 601: Տե՛ս նաև *Uzunçarşxlx I. H. Osmanlx Tarihi. III Cilt,I Kısım. Ankara, 1951, p. 197.*

մարդկանց։ Բանը հասավ այնտեղ, որ սուլթան Մուրադը բանակի մարտունակության հիմքերը սկսեց որոնել այդ անիծյալ սովորությունը արմատախիլ անելու մեջ։ 1635 թ. Երևան արշավելիս նա անխնա հալածանքներ սկսեց բանակում կարգուկանոնը խախտողների՝ սուրճ և ծխախոտ գործածողների դեմ։ «Անդադար շրջի ի մէջ հեծելազորացն զի հուքմ եւ հրաման կատարեալ է որ զայն նոր ելեալ չար մուխն որ ասի թութուն և զսեւ ջրի (սուրճի - Ա. Խ.) ըմպելոյ»,- ասված է մի հիշատակարանում[58]։

Այն, ինչ արգելվում էր մահմեդականներին, այս դեպքում տարածվում էր նաև այլահավատների վրա։ Յասախներից հետո ավերվում էին նրանց մեյխանաներն ու խահվեխանեները, իշխանությունները հրահանգներ էին տալիս պատրիարքարաններին՝ հետևել իրենց միլեթների կարգուկանոնին, բարքերի անաղարտությանը և այլն։ Այս ընդհանուր իրողությունների հենքի վրա պետք է դիտել Գրիգոր Վարագեցու (XVII դ.) տպավորիչ ոտանավորը՝ «Սակս ծուխ քաշողաց» վերնագրով։ Այն ժամանակի հայ երգիծանքի մի ուշագրավ նմուշ է և ունի ճանաչողական նշանակություն՝ վկայելով, որ ծխախոտը բավական տարածում էր գտել առհասարակ կայսրության բնակչության, այդ թվում և հայերի մեջ.

Ոմանք սովոր են ի թութուն և հետևող այն պիղծ գործոյն
Վնաս կառնեն իւրեանց հոգուն, հաց մի չունին ի իւրեանց տուն,
Փող մի չունին, որ տան հոգոյն, երթան պարտեօք գնեն թութուն
Յոժար խմին հետ թուրքերուն, զմոխիրն տան իւրեանց գլխոյն,
Կամաւ լինին ընկեր դիւուն, և կեր լինին անքուն որդուն[59]։

Ծխախոտի արգելքը, սակայն, պետք է վերացվեր, որքան էլ այդ վնասակար սովորույթի դեմ կրքով պայքարեին իշխանությունները և բանաստեղծները։ Առաջինները պետք է բավարարվեին ծխախոտի վաճառքից գոյացող հավելյալ միջոցներով, որ, գոնե, լցնելու էր պետական գանձարանը, իսկ երկրորդները, թերևս, իրենք էլ պետք է խառնվեին ծխողների օրավուր մարդաշատ դարձող զանգվածին։ Ծխախոտի և սուրճի դեմ մղվող քարոզչությունը, ըստ այդմ, պետք է կորցներ իր սրությունը՝ հուրախություն դրանց առևտրով զբաղված առևտրականների։ Այսուհանդերձ, ծխախոտի վաճառականները միայն 1725 թ. կարողացան ձեռք բերել քյահյայի վճիռը՝ ձևականորեն ճանաչվելով որպես առանձին էսնաֆություն[60]։

Օսմանյան հասարակության մեջ, ինչպես ցույց տրվեց վերը, բարքերն ու բարոյականությունը կարգավորող աշխարհիկ օրենսդրությունը մի հայտնի չափով բխեցվում և հենվում էր մահմեդական հանրային իրավունքի՝ շարիաթի վրա։ Շարիաթի նորմերը պարտադրելով նաև ոչ մահմեդական միլեթներին, այդ

---

[58] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Բ (կազմ. **Հակոբյան Վ., Հովհաննիսյան Ա.**), Ե., 1978, էջ 598։

[59] Դիւան հայոց պատմութեան, գիրք Ժ, էջ 66։

[60] ***Gibb H. A., Bowen H.,*** *Islamic Society and the West, vol. 1, part 1, London, p. 291.*

օրենսդրությունը ամրագրում էր խտրականության քաղաքականությունը նրանց նկատմամբ: Եկեղեցիների նորոգման սահմանափակումների, տարազի, դրա որակի ու ձևերի, նախապատիվ և ցածրակարգ համարվող գույների համակարգի, գինու արտադրության և վաճառքի, ծխախոտի և սուրճի գործածության, ինչպես և կենցաղային բարոյականության վերաբերյալ օրենսդրական նորմերը օսմանյան պետության մեջ բռնության հավելյալ միջոցներ էին ոչ մահմեդական հպատակների, կենցաղը, բարոյականությունն ու վարքագիծը վերահսկելու ասպարեզում:

АРМЯНСКАЯ ОБЩИНА КОНСТАНТИНОПОЛЯ И ОСМАНСКОЕ ТРАДИЦИОННОЕ ОБЩЕСТВО (XV-XVII вв.)

ХАРАТЯН А. А.

Резюме

В османской Турции немусульманские общины, в том числе и армяне, были стеснены некоторыми ограничениями, вытекающими из мусульманского общественного права. По нормам шариата были весьма ограничены права на ремонт церквей, а также на строительство каменных домов. Положениями шариата диктовались и периодически устанавливаемые нормы, обязывающие религиозные общины следовать системам одежды, тюрбана, обуви, их цвету и качеству. Мусульманам предоставлялось право на „элитарные” цвета (белый, зел¸ный, абрикосовый, ярко-красный, голубой), а иноверцам – на мрачные тона (ч¸рный, серый, синий и т. д.). Различались цвета, качество и фасон одежды мусульманок и женщин другой веры. Нормы мусульманского быта и морали также навязывались немусульманским подданным империи, сказанное относилось и к потреблению алькогольных напитков, кофе и табака.